

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1919 - ՆՈՅԵՄԲԵՐ - 1919

Խմբագրական. Մեզու Շիրակայ. — Երանիս տրամբ քեզ Հայոց աշխարհ	321
Սարգիսեան Հ. Բ. — Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի	325
Այտընեան Հ. Գրս. — Եւագուռեան դրօշակին (Բանաստ)	331
Սինանեան Հ. Խորէն. — Ժամանակագրութիւն Ս. Գրոց ըստ Շ. Հայկայ	331
Մեզու Շիրակայ. — Քաջասիրտ Թագաւորը	335
Սինանեան Հ. Խորէն. — Այցելութիւն մը արևու	341
Այտընեան Հ. Գրս. — Մանր գիտելիք	345
Արսէն-Երկաթ. — Հնդիկ աշուղը (Բանաստ)	346
Այտընեան Հ. Գրս. — Բամ... փորոտան	348
Թ. Տէր Ստեփանոս. — Աշխատութիւն մարդոյ	351

ՀԱՅ ԾԷՍԸ

1911 տարւոյ ազգային սիւննողոսի
գործոց մէջ

ԱԶԴ

1914ն էր, Հազիւ ձեռքս հասած Սիւննողոսին նորատիպ Գործերը, որ եկեղեցական մտաւոր նոր ապարիւթ մը կը բանային մեր առջև, նստած կզգէինս առանձնութեան մէջ՝ ուի ուշով ու խնդութեամբ կը կարդայի եռանդազին եւ կը նշանակէի խորհրդածութիւններս: Զէի մտածեր բնաւ, — ո՞վ կարող էր մտածել, — թէ քիչ մը վերջ պիտի պայթէր աշխարհաւոր պատերազմը, որ մեր Հովիւներն իրենց հօտերուն հետ զազա-նաց ժանիքներուն զոհ պիտի դնէր, զգեցնելով անոնց մարտիրոսաց կարմիր պատմունանը. որ պղծել եւ ապականել պիտի տար մեր եկեղեցիքն ու սրբութիւնքը. եւ մեր երկիրը պիտի պատէր աղէտ մ'այնքան ահաւոր, որ խրայելի եւ Թոր-զոմայ հին եղբրեղցուաց միասնաժող կոծերն անբաւական պիտի լինէին ողբալու, եւ ապիկար՝ ամոքելու մեր կսկիծը:

Անցաւ փոթորիկը կործանմամբ ամբարշտաց, եւ մեր թուառ ազգին բեկորները կը հաւաքուին այժմ իրարու քով, վերակազմելու քայքայուած մարմինը, վերաշինելու աւերած տունը: Կ'ար-ծարծի մեր յոյսն յաւերժական փրկութեան ջա-հին հանդէպ՝ որ կախուած է մեր առջև: Պիտի դառնանք մահուանէ ի կենսո, պիտի յառնենք մեր իսկ անիւնէն՝ նման փիւնիկ հաւին: Պիտի կանգնին մեր Հովիւներն ալ, եւ մեք պիտի խմ-բուինք անոնց շուրջ մեր նորարկում ու նորա-գարդ սուրբ փառայիններուն մէջ:

Այս յոյսն է, այս հաւատքն է՝ որ կը մղէ զողզոյ ձեռքս՝ յանձնելու մեքենային սոյն աշ-խատութիւնը, որ հինգ տարիներէ ի վեր լքեալ կը մնար փոշիներու ներքեւ: Յետ մեր չարարա-նաց՝ անմիջական պահանջի մը զոհացումը տա-լու չէ այս փորձիկ գործը. այլ ապացոյց մը՝ թէ քաղաքակիրթ ժողովրդները, որ կոշկոճուած ճալուած բռնութենէն, մերկէն ոստաքանց ու տերեւաթափ ծառի մը պէս կը բողբոջին վերստին, կը սկսին ապրիլ իրենց գործունեայ, մտաւոր եւ հոգեւոր կենաց բոլոր ոստերուն մէջ միանգա-մայն:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀՅՈՒՆԻՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՌՈՂԱՅԵՑԻՈՑ

Լոյս տեսաւ Հ. Սամակ Տէր-Մովսէսեանի երկասիրած Հռովմայեցւոց Պատմու-թիւնը, զարդարուած բազմապիսի պատկերներով: Լուրջ գործ մ'է, ամենայն ինամբով պատրաստուած, որ բաց ի պատիւ քերելէ փեղնակլին մատենասէր եւ ժրպշան աշխա-տութեանը, կը յուսանք որ միծապէս օգտակար լինի Հայ երիտասարդութեան:

Ուստի կը մաղթենք ուսումնաստենք մանկուղոյն, ընտիր դասագրքիս ընթերցումով, կազմել ողջամիտ սկզբունքներ, անյողըղը հաւատք, եւ անպարսաւ հայրենասիրու-թիւն: Որով երբեմն ալ իրենցմով պարծի Հայաստանն, ետէ գիտելու Հռովմայեցւոց պէս՝ պափել Միութիւն, պաշտպանել Ազատութիւնը, բարձրացնել անոր շնորհալիւն եւ դարաւոր իշխանութիւնն, մեր կնաշխարհի բնական սահմաններու մէջ: Գինն է ֆր. 5.—